

18.01.2013թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն կոորպորատիվ կառավարման համակարգերի ներդրման շրջանակներում շարունակում է կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը և որոշում էր կայացրել հաշվապահական հաշվառման վարումը (ֆինանսական, հարկային և կառավարչական հաշվառումը) և ֆինանսական համակարգերի կառավարումը հանձնարարել մասնագիտացված կազմակերպության:

Հայտարարված մրցույթին մասնակցել են և միջազգային ցանցի անդամ, և տեղական հեղինակավոր աուդիտորական, խորհրդատվական կազմակերպություններ:

Ընտրությունը կատարվել է տեխնիկական առաջարկների հիման վրա: Հաշվի է առնվել մասնագիտացված կազմակերպության բարի համբավը, փորձը, աշխատակիցների փորձառությունը և որակավորումը, ինչպես նաև հաշվապահական ու ֆինանսական համակարգերի կառավարման առաջարկվող մոտեցումները:

Ներկայացված առաջարկների հիման վրա «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն 18.01.2013թ-ի տնօրենների խորհրդի նիստով որոշում է կայացրել 2013թ. հունվարի 1-ից հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական համակարգերի կառավարումը հանձնարարել «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ին:

01.02.2013թ.

**համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «Ճեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը.**

29.01.2013թ-ին տեղի է ունեցել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով, որի հաստատված օրակարգի մասին որպես էական տեղեկատվություն ներկայացվել է սույն 2012թ-ի դեկտեմբերի 28-ի էական տեղեկատվությամբ: Մասնավորապես ժողովի կողմից հաստատվել է հետևյալ հարցերը.

1. «Ճեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը.
2. «Ճեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման կարգի ու պայմանների հաստատումը.
3. «Ճեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված կանոնադրության փոփոխությունների հաստատումը:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման հիմնական շարժառիթը Ընկերության կրեդիտորական պարտքերի մարումն է: Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվելու է լրացուցիչ հասարակ անվանական բաժնետոմսերի փակ բաժանորդագրությամբ տեղաբաշխման միջոցով: Լրացուցիչ տեղաբաշխման ենթակա բաժնետոմսերի քանակը կազմելու է 106 260 հատ հասարակ անվանական բաժնետոմս, իսկ դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը՝ 1 062 600 000 ՀՀ դրամ:

21.02.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2013թ-ի փետրվարի 29-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում որոշվեց Ընկերության հետագա զարգացման, ընդլայնման, առկա կրեդիտորական պարտքերի մարման և ապրանքային տեսականին ընդլայնելու նպատակով կանխավճարներ կատարելու համար Ամերիաբանկ ՓԲԸ-ից վերցնել վարկ 1,500,000.00 ԱՄՆ դոլարի չափով, որից 250,000.00 ԱՄՆ դոլարը ձեռքբերման պայմանագիր ստորագրելուց հետո կուղղվի 10 հատ ինքնաթափ բեռնատար մեքենաների ձեռքբերմանը՝ որպես 30% կանխավճար:

Ֆինանսական միջոցների ներգրավվումը մասնավորապես պայմանավորված է Ընկերության հիմնական գործունեության սեզոնայնության հետ կապված պահանջարկի նվազմամբ և սեզոնի առաջիկա ակտիվացման հետ կապված հումքերի նվազագույն մնացորդների ավելացմամբ: Վարկը 9 ամսով է և մինչև տարեվերջ սպասվող ֆինանսական հոսքերի ավելացմամբ կմարվի վերը նշված վարկը: Բացի սովորական աճից, 2013թ-ին սպասվում է հասույթի ավելացում մասնավորապես Հյուսիս Հարավ ճանապարհաշինական աշխատանքներում Ընկերության բազմակողմանի (ինքնաթափ բեռնատարերով ցեմենտի, ավազի, բետոնի տեղափոխում և ճանապարհաշինական սպասարկման աշխատանքների կատարում) ներգրավվածության շնորհիվ, ինչպես նաև գաջին փոխարինող գիպսոնիտի արագորեն աճող պահանջարկի շնորհիվ:

27.03.13թ.

**համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը.**

2013թ-ի մարտի 25-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2013թ-ի ապրիլի 25-ին, ժամը 11:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի արտահերթ ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում: Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև

1. Ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշների կանոնակարգի համաձայն Տնօրենների խորհրդով առաջարկվեց ընդհանուր ժողովին ներկայացնել Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ, Աուդիտ Սերվիս ՍՊԸ և Սօս Աուդիտ ՍՊԸ աուդիտորական ընկերությունների թեկնածությունները՝ 2012 թվականի աուդիտի իրականացման համար:

2. Ընկերությունը 25.03.13թ-ին կնքեց պայմանագիր Ամերիաբանկ ՓԲԸ-ի հետ 1,0 մլրդ դրամ վարկի ստացման վերաբերյալ, որը 1,022,420,000.00 դրամի չափով ուղղվեց Ընկերության խոշոր բաժնետիրոջ 2011 և 2012թթ-ների ընթացքում ներդրված փոխառության պարտքի մարմանը: Ընկերության խոշոր բաժնետեր Սամվել Բեգլարյանը նույն օրը նույն գումարի չափով ներդրեց հայտարարված կանոնադրական կապիտալի մեծ մասը, իսկ Ընկերությունը մարեց Ամերիաբանկի վարկը:

30.04.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

<Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ն պատրաստել է 2012թ-ի տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ նրանում ասոցիացված կազմակերպության (Շեն Ջորջիա, Վրաստան) ֆինանսական հաշվետվությունների ազդեցությանը: Շեն Ջորջիայի ղեկավարությունը խոստացել է, որ ֆինանսական հաշվետվությունները մեզ կներկայացնի մինչև ս.թ. մայիսի 5-ը: Բացի այդ միացել են Շեն Գրուպ ՓԲԸ-ն և Հանթսման Բիլդինգ Փրոդաքթս ՓԲԸ-ն, որոնց հաշվետվությունների համախմբումը ժամանակատար է և Ընկերության բաժնետերերի ժողովով հաստատած ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ին դրանք ուշ են ներկայացվել:

Չետևաբար, սահմանված ժամկետում չենք կարող հրապարակել \$ՀՄՍ-ներին համապատասխան պատրաստված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերալ անկախ աուդիտորական եզրակացությունը, սակայն առավելագույնը մինչև 08.05.13թ.-ը կհրապարակվեն սահմանված կարգով:

08.05.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

<Շեն-Կոնցեռն> ՓԲԸ-ն և Ֆինտեխ Աուդիտ ՓԲԸ-ն ըստ էության ավարտել են ֆինանսական հաշվետվության կազմումը ՖՀՄՍ-ներին համապատասխան, սակայն կարիք կա լրացուցիչ ստուգման: Այդ իսկ պատճառով հետաձգվում է աուդիտի եզրակացությամբ հաստատված ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը մինչև մայիսի 13-ը, որը մայիսի 8-ին հաջորդող առաջին աշխատանքային օրն է:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ անկախ աուդիտորական եզրակացությունը պատրաստ լինելուն պես (առավելագույնը մինչև 13.05.13թ.) դրանք անմիջապես կուղարկվեն և կհրապարակվեն սահմանված կարգով:

15.05.13թ.

**Ջամաձայն ՅՅ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի (այսուհետև՝
կանոնակարգ), 49-րդ կետի, հրապարակում եմ 'Շեն-Կոնցեռն' ՓԲԸ-ի կողմից
հրապարակված տեղեկությունների վերաբերյալ հաշվետվություն**

2012թ-ի ընթացքում 'Շեն – Կոնցեռն' ՓԲԸ-ն համաձայն կանոնակարգի ներկայացրել է էական տեղեկատվություններ ընդհանուր թվով 7 հատ, ինչպես նաև 1 տարեկան ու 1 կիսամյակային հաշվետվություններ (կից կանոնակարգով պահանջվող փաստաթղթերով), որոնք բոլորը տեղադրված են Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքում:

16.03.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «ՇԵՆ-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2013թ-ի մայիսի 13-ին տեղի ունեցավ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով, որի ընթացում քննարկվեցին նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելու և տեղաբաշխված կանոնադրական կապիտալը գրանցելու հարցեր, որոնց վերաբերյալ մասնավորապես ընդունվեցին հետևյալ էական որոշումները՝

1. Ընկերության լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքում հաստատվեց Ընկերության կանոնադրական կապիտալի մեծությունը և սահմանվեց, որ Ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալը 3 350 000 000 (երեք միլիարդ երեք հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ է, որը կազմում է 335 000 (երեք հարյուր երեսունհինգ հազար) հատ տեղաբաշխված հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ է:

2. Միջազգային ֆինանսական Կորպորացիայի և Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի համատեղ ջանքերով Ընկերությունում իրականացրած կորպորատիվ կառավարման գնահատման արդյունքները, որոնցում խորհուրդ էր տրվում Ընկերության կանոնադրությունը համապատասխանեցնել կորպորատիվ կառավարման միջազգային սկզբունքներին,

3. Ընկերության վերաբրենդավորման ռազմավարության որդեգրումը, որի արդյունքում փոխվում է և Ընկերության ֆիրմային անվանումը, և ապրանքային նշանը, ու Ընկերությունը շուկայում դիրքավորվելու է "ՇԵՆ ՅՈՒՆԻՍԳ" ֆիրմային անվանումով և ապրանքային նշանով:

14.06.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2013թ-ի հունիսի 11-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2013թ-ի հունիսի 29-ին, ժամը 16:00-ին Երևան, Շիրակի 2/2 հասցեում հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով, որի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև՝

1. Հիմնվելով Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Կորպորատիվ կառավարման կենտրոնի համատեղ ջանքերով իրականացրած Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի գնահատման արդյունքների վրա տնօրենների խորհուրդը որոշեց առաջարկ ներկայացնել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին տնօրենների խորհրդի կազմը 5 անդամ սահմանելու վերաբերյալ: Ընդ որում, Ընկերության խորհրդի կազմում առաջարկվեց ընդգրկել առնվազն երկու ոչ գործադիր տնօրեն, այսինքն՝ անձինք, ովքեր ներգրավված չեն Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ, և նրանցից մեկը համապատասխանում է միջազգային պրակտիկայում խորհրդի անկախ անդամի նկատմամբ կիրառվող չափանիշներին: Որպես ոչ գործադիր տնօրենի թեկնածու առաջարկվեց ԹՄ – Աուդիտ ՓԲԸ գլխավոր Թաթուկ Մովսիսյանին: Վերջինս մասնագիտությամբ Ինժիներ տնտեսագետ է և ավարտել է Հայաստանի ճարտարագիտական համալսարանը, ինչպես նաև հանդիսանում է որակավորված աուդիտոր: Որպես ոչ գործադիր անկախ տնօրենի թեկնածու՝ առաջարկվեց Գագիկ Եղիազարյանի թեկնածությունը: Վերջինս մասնագիտությամբ Բիզնեսի կառավարիչ է և ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանը, այնուհետև Հարվարդի համալսարանը:

Ընկերության տնօրենների խորհրդի անդամ Իրինա Դավթյանին փոխարինեց Ընկերության Ռազմավարական զարգացման վարչության պետ Շանթ Անանյանը: Վերջինս մասնագիտությամբ հանքաշինարար և արդյունաբերության կառավարիչ է

և ավարտել է Հայաստանի Ճարտարագիտական համալսարանը, այնուհետև
Հայաստանի Ամերիկյան համալսարանը:

2. Որպես վերստուգող առաջարկվեց Ընկերության բաժնետերերի
տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել Ընկերության ներքին
աուդիտոր Արմեն Բալասանյանի թեկնածությունը: Վերջինս մասնագիտությամբ
տնտեսագետ է և ավարտել է Հայաստանի տնտեսագիտական համալսարանը:

3. Ընկերության աշխատակիցների համար լրացուցիչ կենսաթոշակ
ապահովելու նպատակով՝ որոշեց մասնակցել կամավոր կուտակային
կենսաթոշակային բաղադրիչին՝ պայմանագիր կնքելով կենսաթոշակային ֆոնդի
կառավարիչ “Կապիտալ Ասեթ Մենեջմենթ” ՓԲԸ-ի հետ: Հաստատվեց Ընկերության
կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչին մասնակցության կարգն ու
պայմանները, համաձայն որոնց աշխատակիցներին առաջարկվում են հետևյալ
կենսաթոշակային սխեմաները.

- Աշխատակցի մասնակցության կրկնապատկում.
- Աշխատակցի մասնակցության ֆինանսավորում:

Ա. Շ. Խ ա տ ա կ ց ի մ ա ս ն ա կ ց ու թ յ ա ն կ ր կ ն ա պ ա տ կ ու մ

ս ի ս է մ ա ն

աշխատակիցների նկատմամբ, ովքեր մասնակցում են կամավոր կուտակային
կենսաթոշակային բաղադրիչին և իրենց համախառն աշխատավարձի առնվազն 1%-
ի չափով կատարում կամավոր կուտակային վճարներ: Ընկերությունը
կրկնապատկում է աշխատակցի կողմից կատարված կամավոր կուտակային
կենսաթոշակային վճարը, սակայն ոչ ավելի, քան աշխատակցի համախառն
աշխատավարձի 5%-ը:

Ա. Շ. Խ ա տ ա կ ց ի

մ ա ս ն ա կ ց ու

ա շ խ ա տ ա կ ի ց ն եր ի

ն կ ա տ մ ա մ բ,

մ ա ս ն ա կ ց ու թ յ ա ն

կ ր կ ն ա պ ա տ կ ու մ Ը ն կ եր ու թ յ ա ն ա շ խ ա տ ա կ ի ց ն եր ի ա յ ս

խ մ բ ի օ գ ա ի ն կ ա տ ա ռ ու մ է կ ա մ ա վ որ կ ու տ ա կ ա յ ի ն կ ե ն ս ա թ թ շ ա կ ա յ ի ն վ ճ ա ռ, ս ա կ ա յ ն
ո չ ա վ է լ ի, ք ա ն ա շ խ ա տ ա կ ջ ի հ ա մ ա խ ա ռ ն ա շ խ ա տ ա վ ա ռ ձ ի 1 %-ը:

26.07.13թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի, 50-րդ կետի, բացահայտում եմ «Շեն Յուլիսգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

«Շեն Յուլիսգ» ՓԲԸ-ն 23.07.13թ-ին պայմանագիր է կնքել «ԿՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի հետ՝ 4.0 մլն ԱՄՆ դոլար վարկային սահմանաչափ ստանալու վերաբերյալ: Առաջին փուլով ստացվելու է 2.5 մլն ԱՄՆ դոլար, որից՝

- 1.6 մլն դոլարն ուղղվելու է ընկերության վարկերի վերաֆինանսավորմանը,
- 0.9 մլն դոլարն ուղղվելու է ընկերության պարտավորությունների մարմանը:

11.09.13թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի,
50-րդ կետի, բացահայտում եմ «Շեն Զոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող
հետևյալ էական տեղեկությունը՝**

2013թ-ի սեպտեմբերի 9-ին տեղի ունեցավ տնօրենների խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվեցին որոշ հարցեր և որոշում ընդունվեց 2013թ-ի սեպտեմբերի 23-ին, ժամը 16:00-ին հրավիրել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով՝ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում, Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող փաստաթղթերին բաժնետերերը կարող են ծանոթանալ Ընկերության գտնվելու վայրում՝ ՀՀ, ք. Երևան, Շիրակի 2/2 հասցեում:

Տնօրենների խորհրդի այլ էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Ընկերության խորհրդի նախագահ ընտրվեց խորհրդի անդամ Սամվել Բեգլարյանը:
2. Ընկերության գործադիր մարմնի (բարձրագույն գործադիր ղեկավարության) քանակական կազմը սահմանվեց 3 անդամից՝ հետևյալ կազմով.
 - գլխավոր գործադիր տնօրեն՝ ի դեմս Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Պապ Բադալյանի (մասնագիտությամբ տնտեսագետ, ավարտել է Երևանի ժողտնտեսության պետական ինստիտուտը):
 - ֆինանսական տնօրեն՝ ի դեմս «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ի կողմից լիազորված անձ Ռուդիկ Պողոսյանի (մասնագիտությամբ, տնտեսագետ հաշվապահ է ավարտել է Գավառի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը):
 - Մարդկային ռեսուրսների կառավարման տնօրեն՝ ի դեմս մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար Սյուզաննա Ենգիբարյանի (մասնագիտությամբ սոցիոլոգ, ավարտել է Երևանի պետական համալսարանի սոցիալագիայի ֆակուլտետը՝ մագիստրոսի կոչումով):
3. Կորպորատիվ կառավարման ընթացակարգերը կանոնակարգելու նպատակով կորպորատիվ քարտուղար նշանակվեց Ընկերության ռազմավարական զարգացման վարչության մենեջեր Աննա Վարդանյանը

(մասնագիտությամբ լեզվաբան, ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը, այնուհետև Վալենսիայի համալսարանի անգլերեն լեզվաբանության ֆակուլտետը՝ մագիստրոսի կոչումով):

4. Հաստատվեց Ընկերության կորպորատիվ կառավարման հարաբերությունները կարգավորող ներքին իրավական ակտերի փաթեթը՝ հետևյալ բովանդակությամբ.

- Ընկերության կորպորատիվ կառավարման կանոնագիրք,
- Ընկերության կորպորատիվ վարքագծային կանոններ,
- Ընկերության կորպորատիվ քարտուղարի կանոնակարգ,
- Ընկերության ռիսկերի կառավարման կանոնակարգ,
- Ընկերության շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման կանոնակարգ:

18.09.13թ.

**Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կանոնակարգ 4/04-ի,
50-րդ կետի, բացահայտում եմ «Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող
հետևյալ էական տեղեկությունը`**

«Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ի ղեկավար անձնակազմում տեղի է ունեցել փոփոխություն. մասնավորապես` Ընկերության Ռազմավարական զարգացման վարչության պետ Շանթ Անանյանն ազատվել է աշխատանքից, տվյալ պաշտոնում նշանակվել է Ընկերության ռազմավարական զարգացման վարչության մենեջեր Աննա Վարդանյանը:

23.09.13թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 4/04 կանոնակարգի 50-րդ կետի` բացահայտում ենք «Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2013 թվականի սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի էական որոշումները ներկայացվում են ստորև.

1. Հաստատվել են Ընկերության հետևյալ ներքին իրավական ակտերը.

Ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը.

Բ) Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգը.

Գ) Ընկերության վերստուգողի կանոնակարգը.

Դ) Ընկերության գործադիր մարմնի կանոնակարգը:

2. Սահմանվել է, որ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին իրավական ակտերն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հոկտեմբերի 1-ից:

3. Հանձնարարվել է Ընկերության կորպորատիվ քարտուղարին բացահայտել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի հիմնադրույթները Ընկերության ինտերնետային կայքում և դրանց վերաբերյալ հարցերի դեպքում` ապահովել դրանց պատշաճ պարզաբանումը:

24.09.13թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 4/04 կանոնակարգի 50-րդ կետի` բացահայտում ենք «Շեն Յոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

2013 թվականի սեպտեմբերի 23-ին տեղի է ունեցել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:

Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի էական որոշումները ներկայացվում են ստորև.

4. Հաստատվել են Ընկերության հետևյալ ներքին իրավական ակտերը.

Ա) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի վարման կարգը.

Բ) Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգը.

Գ) Ընկերության վերստուգողի կանոնակարգը.

Դ) Ընկերության գործադիր մարմնի կանոնակարգը:

5. Սահմանվել է, որ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին իրավական ակտերն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հոկտեմբերի 1-ից:

6. Հանձնարարվել է Ընկերության կորպորատիվ քարտուղարին բացահայտել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի հիմնադրույթները Ընկերության ինտերնետային կայքում և դրանց վերաբերյալ հարցերի դեպքում` ապահովել դրանց պատշաճ պարզաբանումը:

25.10.2013թ.

**համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում էմ «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը**

23.10.2013թ. տեղի է ունեցել Ընկերության խորհրդի նիստ հետևյալ օրակարգով.

1. Ընկերության պարտատոմսերի թողարկման հարցը.
2. Ընկերության ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգի ու պայմանների հաստատումը:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը գործում է պետական գրանցումից հետո երեք տարուց ավելի, և Ընկերության երկու տարեկան հաշվեկշիռները սահմանված կարգով հաստատված են, Ընկերության գործարար ծրագրերի ֆինանսավորման նպատակով՝ **Ընկերության խորհուրդը որոշում է** ընդունել թողարկել 40,000 (քառասուն հազար) հատ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 11% եկամտաբերությամբ, 60 ամիս շրջանառության ժամկետով, ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր (Պարտատոմսեր):

խորհուրդը հաստատել է Ընկերության ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության և մարման կարգն ու պայմանները:

Միաժամանակ **խորհուրդը սահմանել է**, որ՝

- Պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրավար է հանդես գալու «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի հետ համապատասխան պայմանագիր կնքած որևէ Հաշվի Օպերատոր:
- Ընկերությունը դիմելու է ՆԱՄԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա ԲԲԸ-ին Պարտատոմսերը ցուցակելու նպատակով:
- Պարտատոմսերի երկրորդային շուկայի իրացվելիությունը ապահովելու նպատակով Ընկերությունը արժեթղթերի շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված արժեթղթերի շուկայի որևէ մասնագիտացված մասնակցի հետ:

26.11.13թ.

համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝ բացահայտում են «Շեն Ջոլդինգ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը.

«Շեն Ջոլդինգ» ՓԲԸ-ն (այսուհետև՝ Ընկերություն) վերահաստատեց Հայաստանի կապիտալի շուկայում իր ակտիվ դերակատարությունը պահպանելու մտադրությունը և 20.11.13թ-ից մինչև 25.11.13թ-ը հաջողությամբ տեղաբաշխեց 40,000 (քառասուն հազար) հատ, 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, տարեկան 11% եկամտաբերությամբ, 60 ամիս շրջանառության ժամկետով, ոչ փաստաթղթային, անվանական, արժեկտրոնային պարտատոմսեր: Վերջինս ձեռք բերեցին ընդհանուր թվով 26 ֆիզիկական և 6 իրավաբանական անձինք:

25.11.13թ-ին Ընկերությունը մարեց 2010թ-ի նոյեմբերին թողարկված 1.5մլրդ դրամի պարտատոմսերի մայր գումարները և տոկոսները: Նշենք, որ 2010թ-ի պարտատոմսերի թողարկումից ստացված գումարը ուղղվել էր Հանրաման Բիլդինգ Փրոդաքթս ՍՊԸ-ի բաժնետոմսերի ձեռքբերմանը, որի արդյունքում Ընկերության Երևան քաղաքի արտադրական հրապարակի տարածքը ավելացավ ևս 4.2 հա-ով: Տվյալ տարածքում արդեն իսկ գործում է 2012թ-ին կառուցված բետոնե բլոկների 2-րդ արտադրամասը, ինչպես նաև տվյալ տարածքի մի մասը ծառայում է որպես Շեն Դեկոր խանութների ցանցի պահեստային տնտեսություն: Տվյալ տարածքի վրա Ընկերությունը մտադրություն ունի ավելացնել նոր արտադրություններ՝ մասնավորապես գիպսի վերամշակման և չոր շաղախների արտադրության թվով 3-րդ արտադրամասերը, ինչպես նաև ընդլայնել մանրածախ վաճառքի համար նախատեսված ապրանքների պահպանման պահեստային տնտեսությունը:

10.12.13թ.

**համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 4/04 կանոնակարգի 50-րդ կետի՝
բացահայտում են «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական
տեղեկությունը.**

2013 թվականի դեկտեմբերի 9-ից ուժի մեջ է մտել «ՇԵՆ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲԸ-ի 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 60 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 11% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 40,000 (քառասուն հազար) հատ անվանական պարտատոմսերի ցուցակման մասին որոշումը, ըստ որի «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMSHNCB21ER2 ծածկագիրը, ինչպես նաև ցուցակվել և ընդգրկվել է պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում՝ ստանալով SHNCB7 հապավումը: Տվյալ որոշման մասին տեղեկությունները հրապարակված են նաև «ՆԱՍՂԱՔ ՕԷՄԵՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի ինտերնետային կայքում՝ <http://nasdaqomx.am/am/instruments.htm> :